# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովաշեն համայնք, հեռ. (094)21-71-09, (091)21-71-05, էլ. փոստ
zovashen.kotayq@mta.gov.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԱՊԵՏ ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

N 43
*05 օգոստոս 2015թ.*

Հարգելի պարոն մարզպետ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի պահանջների կից ներկայացվում է համայնքի ավագանու 28.07.2015 թվականին կայացած հինգերորդ արտահերթ նիստի որոշումները :

Առդիր 4 թերթ:

**Համայնքի ղեկավար՝** **ՍԵԴՐԱԿ ՍԱՖԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Զովաշեն, հեռ. (094)21-71-09, (091)21-71-05, էլ. փոստ zovashen.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈՒԼԻՍԻ 2015թվականի N 14

### ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 28-Ի ԹԻՎ 5 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի , հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը , Զովաշեն համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել համայնքի ավագանու 2015 թվականի հուլիսի 28-ի թիվ 5 արտահերթ նիստի օրակարգը հետևյալ հարցերով՝

1.Զովաշենի գյուղապետարանի աշխատակազմի 2015 թվականի երկրորդ կիսամյակի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

2.Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԺՈՐԱ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
3. ՄԽԻԹԱՐՅԱՆ ԷՎԵԼԻՆԱ
4. ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ
5. ՍԱՖԱՐՅԱՆ ՍԱՀԱԿ

Համայնքի ղեկավար՝ ՍԵԴՐԱԿ ՍԱՖԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Զովաշեն, հեռ. (094)21-71-09, (091)21-71-05, էլ. փոստ zovashen.kotayq@mta.gov.am


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈՒԼԻՍԻ 2015թվականի N 15-Ա

### ԶՈՎԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Զովաշենի գյուղապետարանի աշխատակազմի 2015 թվականի երկրորդ կիսամյակի աշխատակիցների քանակը , հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Զովաշեն համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 22-ի « Զովաշենի գյուղապետարանի աշխատակազմի 2015 թվականի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին » N 22-Ա որոշումը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԺՈՐԱ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
3. ՄԽԻԹԱՐՅԱՆ ԷՎԵԼԻՆԱ
4. ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ
5. ՍԱՖԱՐՅԱՆ ՍԱՀԱԿ

Համայնքի ղեկավար՝ ՍԵԴՐԱԿ ՍԱՖԱՐՅԱՆ

Հավելված
Զովաշենի գյուղական համայնքի ավագանու
2015թ. Հուլիսի 28-ի 15-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՄԱՐ

Աշխատակիցների թվաքանակը՝ 6

| Հ/h | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | Պաշտոնի ծածկագիրը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Հավելումը | Հավելավճարը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Գյուղապետարանի աշխատակազմ | Համայնքի ղեկավար | Քաղաքական | - | 1 | 112434 | - | - | 112434 |
| 2 | | Համայնքի ղեկավարի տեղակալ | Հայեցողական | - | 1 | 75397 | - | - | 75397 |
| 3 | | Աշխատակազմի քարտուղար | Համայնքային ծառայության | 1.2-1 | 1 | 83140 | - | - | 83140 |
| 4 | | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-1 | 1 | 79000 | - | - | 79000 |
| 5 | | I-ին կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.2-1 | 1 | 77904 | - | - | 77904 |
| 6 | | Հավաքարար | Տեխնիկական սպասարկման | - | 1 | 72750 | - | - | 36375 |
| 7 | | Պահակ | Տեխնիկական սպասարկման | - | | 72750 | - | - | 36375 |
| | Ընդամենը | | | | 6 | 573375 | | | 500625 |

Համայնքի ղեկավար Ս.Սաֆարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Զովաշեն, հեռ. (094)21-71-09, (091)21-71-05, էլ. փոստ zovashen.kotayq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

28 ՀՈՒԼԻՍԻ 2015թվականի N 16-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 3-րդ հոդվածի և <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի $14^{3}$- ի 9-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Զովաշեն գյուղական համայնքում 0.01 հա հողամասի նպատակային նշանակության փոփոխման նպատակով կազմված հողաշինարարական գործի վերաբերյալ հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 15.06.2015թ. N89/2 դրական եզրակացությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Զովաշեն համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, 07-028-0001 կադաստրային ծածկագիրը կրող, 0.01 հա հողամասի հողօգտագործման սխեման:

2. Զովաշեն համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, 07-028-0001 ծածկագիրը կրող, 0.01 հա հողամասը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողային հողերի կատեգորիա՝ կապի հողերի գործառնական նշանակության (թվային հեռուստառադիոհեռարձակման ցանց):

3. Զովաշեն գյուղական համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

4. Թույլատրել համայնքի ղեկավարին կազմելու համապատասխան փաստաթղթեր :

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԺՈՐԱ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
3. ՄԽԻԹԱՐՅԱՆ ԷՎԵԼԻՆԱ
4. ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՍԱՖԱՐՅԱՆ ՍԱՀԱԿ

Համայնքի ղեկավար՝ ՍԵԴՐԱԿ ՍԱՖԱՐՅԱՆ